ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2756-Ա « 29 » մայիսի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի Հ.2305-Ա, 2008 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 06-Ի Հ.2011-Ա ԵՎ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 01-Ի Հ. 748-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 37-րդ հոդվածով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 53-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Պաշտպանության նախարարության 19.05.2026թ. հ.24636-26 դիմումը.

1.Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքերին տրամադրել հասցեներ՝ համաձայն հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել Երևանի քաղաքապետի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևան քաղաքում անշարժ գույքի հասցեներ տրամադրելու մասին» հ.2305-Ա որոշման հավելվածի 1-ին կետի 4-րդ պարբերությունը:

3.Ուժը կորցրած ճանաչել Երևանի քաղաքապետի 2008 թվականի մայիսի 06-ի «Երևան քաղաքում անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու և Երևանի քաղաքապետի 30.04.2008թ. հ.1978-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» հ.2011-Ա որոշման հավելվածի 35-րդ կետը:

4. Ուժը կորցրած ճանաչել Երևանի քաղաքապետի 2018 թվականի մարտի 01-ի «Անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին» հ.748-Ա որոշման հավելվածի 71-րդ կետը:

5. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին սույն որոշման օրինակները 3 աշխատանքային օրվա ընթացքում առաքել վարչական շրջանների ղեկավարներին, Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության Երևան քաղաքի վարչության բաժինների պետերին և դիմողներին:

6.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

7. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

5/29/2026

X

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246

Հավելված
Երևանի քաղաքապետի
29.05.2026թ.
հ. 2756 -Ա որոշման

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ.Հ.	Դիմողը	Անշարժ գույքի գտնվելու վայրը	Անշարժ գույքի տեսակը	Տրամադրվող հասցեն	Հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը	Փոստային դասիչը
1	2	3	4	5	6	7
1	Արմենակ Օսիպյան /լիազորված անձ/ Գրիշա և Աննա Սահակյաններ	Մալաթիա-Սեբաստիա	հողամաս	Գրիշա և Աննա Սահակյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում գտնվող հողամասին /վկ. հ.21052026-01-0112/ տրամադրել հասցե՝ Հաղթանակ թաղամաս, 1-ին փողոց, 12-րդ նրբանցք, հ.1	01073WTYXRQK	
2	Նարինե Օրդոյան, Տաթևիկ, Սաթենիկ Սարգսյաններ	Զ. Անդրանիկի փողոց, հ.108/3	առևտրի սրահ	Նարինե Օրդոյանին, Տաթևիկ և Սաթենիկ Սարգսյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող, Զ. Անդրանիկի փողոցի հ.108/3 հասցեում գտնվող առևտրի սրահի /վկ. հ.07022022-01-0201, հող. ընդհ. բաժն. 43.02քմ, 2.27քմ, շին. ընդհ. բաժն. 1.6քմ/ բաժանման հատակագծով առանձնացվող 34.0քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Զ. Անդրանիկի փողոց, հ.108/5	01073AFNVXMA	
3	Վարդան Ապրեսյան /լիազորված անձ/ Վալերի Առաքելյան	Սեբաստիայի փողոց, հ.132	բնակելի տուն	Ըստ օրենքի ժառանգության իրավունքի 28.10.2024թ. հ.18624 վկայագրով, Վալերի Առաքելյանին փոխանցված ժառանգական գույքին՝ Սեբաստիայի փողոցի հ.132 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել հասցե՝ Սեբաստիայի փողոց, հ.132/2	01073CWKCEYR	
4	Լևոն Ամիրաղյան /լիազորված անձ/ «Ի ԷՄ ՍԻ» ՓԲԸ	Փ. Բուզանդի փողոց, հ.38	բնակելի տուն	Փ. Բուզանդի փողոցի հ.38 հասցեում գտնվող բնակելի տանը /հիմք՝ Անշարժ գույքը հանրության գերակա շահերի ապահովման նպատակով վերցնելու ու փոխհատուցում վճարելու մասին 12.05.2026թ. հ.11082 պայմանագիր/ տրամադրել հասցե՝ Փ. Բուզանդի փողոց, հ.38/2	01063MQJTXG6	

5	Յուրա Մարչենկո /լիազորված անձ/ Հովհաննես Մկոյան	Նոր Նորքի 5-րդ մ/շ, հ.63 շենք, հ.3, Մ. Գալշոյան փողոց, հ.35/2 և հ.35	հողամաս	Հովհաննես Մկոյանին սեփականության իրավունքով պատկանող, Նոր Նորքի 5-րդ մ/շ-ի հ.63 շենքի հ.3, Մ. Գալշոյան փողոցի հ.35/2 և հ.35 հասցեներում գտնվող շինությունների զբաղեցրած հողամասերին /վկ. հ.21082025-01-0052, հ.27052025-01-0079, հ.29042022-01-0338 և 14.05.2026թ. հ.ՆԹ-5725-26 նախագծման թույլտվություն/, ըստ միավորման հատակագծի, տրամադրել մեկ միասնական հասցե՝ Մ. Գալշոյան փողոց, հ.35/2	01083DZDXYUK	
6	ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Գ. Հասրաթյան փողոց, հ.25/11	բազմաբնակարան բնակելի շենք	Գ. Հասրաթյան փողոցի հ.25/11 հասցեում գտնվող, բաժանման հատակագծով առանձնացվող 3526.5քմ մակերեսով բազմաբնակարան բնակելի շենքին /վկ. հ.16022026-01-0326, հող. 1156.0քմ/ տրամադրել հասցե՝ Գ. Հասրաթյան փողոց, հ.15/3	01013ZQ4NDRF	
7	ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Գ. Հասրաթյան փողոց, հ.25/11	բազմաբնակարան բնակելի շենք	Գ. Հասրաթյան փողոցի հ.25/11 հասցեում գտնվող, բաժանման հատակագծով առանձնացվող 2839.9քմ մակերեսով բազմաբնակարան բնակելի շենքին /վկ. հ.16022026-01-0326, հող. 1037.3քմ/ տրամադրել հասցե՝ Գ. Հասրաթյան փողոց, հ.15/4	01013MPZGRTU	
8	ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Գ. Հասրաթյան փողոց, հ.25/11	բազմաբնակարան բնակելի շենք	Գ. Հասրաթյան փողոցի հ.25/11 հասցեում գտնվող, բաժանման հատակագծով առանձնացվող 6871.4քմ մակերեսով բազմաբնակարան բնակելի շենքին /վկ. հ.16022026-01-0326, հող. 1054.9քմ/ տրամադրել հասցե՝ Գ. Հասրաթյան փողոց, հ.15/5	01013DRLGAVE	
9	ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Գ. Հասրաթյան փողոց, հ.25/11	հողամաս	Գ. Հասրաթյան փողոցի հ.25/11 հասցեում գտնվող, բաժանման հատակագծով առանձնացվող 3828.0քմ մակերեսով հողամասին /վկ. հ.16022026-01-0326/ տրամադրել հասցե՝ Գ. Հասրաթյան փողոց, հ.15/2	01013CRPR8XR	
10	ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Գ. Հասրաթյան փողոց, հ.25/11	հողամաս	Գ. Հասրաթյան փողոցի հ.25/11 հասցեում գտնվող 38581.8քմ մակերեսով մնացորդային հողամասին /վկ. հ.16022026-01-0326/ տրամադրել հասցե՝ Գ. Հասրաթյան փողոց, հ.15/6	01013SDM84YA	
11	Տիգրան Պարոնյանց	Դավիթ Բեկի փողոց, հ.174/27 և հ.204/10	հողամաս	Տիգրան Պարոնյանցին սեփականության իրավունքով պատկանող, Դավիթ Բեկի փողոցի հ.174/27 և հ.204/10 հասցեներում գտնվող հողամասերին /բնակելի տուն՝ 272.2քմ, վկ.հ.05052026-01-0098 և հ.05052026-01-0153/ ըստ միավորման հատակագծի տրամադրել մեկ միասնական հասցե՝ Դավիթ Բեկի փողոց, 2-րդ փակուղի հ.16/7	01083S7PWUH3	

12	Անի Դեմիրճյան /լիազորված անձ/ Արման Վարժապետյան	Օրբելու փողոց, հ.11	բնակելի տուն	ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 29.06.2005թ. գործ 05-2039 վճռով, Արման Վարժապետյանի /Նազարյան/ սեփականության իրավունք ճանաչված Օրբելու փողոցի հ.11 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել հասցե՝ Օրբելի Եղբայրների փողոց, հ.11/2	010335NQVKST	
13	Ծաղիկ Հայրապետյան	Արարատյան փողոց, 2-րդ նրբանցք, հ.3ա	բնակելի տուն	Անշարժ գույքի մասի նվիրատվության 21.05.2026թ. հ.2140 պայմանագրով Ծաղիկ Հայրապետյանին նվիրած Արարատյան փողոցի 2-րդ նրբանցքի հ.3ա հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել հասցե՝ Արարատյան փողոց, 2-րդ նրբանցք, հ.3/1	01113PLLZTFS	
14	Արթուր Մկրտչյան	Գ. Գյուլբենկյան փողոց, հ.39բ	ոչ բնակելի տարածք	Անշարժ գույքի առուվաճառքի 14.05.2026թ. հ.10907 պայմանագրով Արթուր Մկրտչյանի կողմից ձեռք բերված, Գ. Գյուլբենկյան փողոցի հ.39բ հասցեում գտնվող ոչ բնակելի տարածքին տրամադրել հասցե՝ Գ. Գյուլբենկյան փողոց, հ.39բ շենք, շինություն հ.38	01033KBKL3WC	
15	Արամ Ազիզյան	Քանաքեռ ՀԷԿ թաղամաս, հ.4 շենք, հ.12	բնակարան	Արամ Ազիզյանին սեփականության իրավունքով պատկանող, Քանաքեռ ՀԷԿ թաղամասի հ.4 շենքի հ.12 հասցեում գտնվող բնակարանի /վկ. հ.10042026-01-0144, ընդհ. բաժն. 1.4քմ/ բաժանման հատակագծով առանձնացվող 37.3քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Քանաքեռ ՀԷԿ թաղամաս, հ.4 շենք, բն.12/1	01033SUWNQ2Y	
16	Գագիկ Պետրոսյան	Դավթաշեն 2-րդ թաղամաս, հ.21/4	հողամաս	Գագիկ Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող, Դավթաշեն 2-րդ թաղամասի հ.21/4 հասցեում գտնվող բնակելի տան /վկ. հ.25012019-01-0214/ բաժանման հատակագծով առանձնացվող 169.1քմ մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ Դավթաշեն 2-րդ թաղամաս, հ.21/7	010434BXMU5V	

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

5/29/2026

X

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246